«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Դաստիարակ՝ Հասմիկ Սարգսյան

«Շնողի«Հեքիաթ»մանկապարտեզ»ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն_____3

Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները_____4-5

Նախադպրոցականի դաստիարակության նպատակը և խնդիրները_5-10

Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում_____11-12

Ընտանքի և մանկապարտեզի համագործակցության ձևերը_____12-14

Համագործակցությունը ընտանիքի հետ_____15-17

Գործնական մաս _____18

Եզրակացություն_____19

Գրականության ցանկ_____20

Ներածություն

Ժամնակակից մանկպարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը:Մանկավարժները պետք է ստեղծեն ներդշնակ ամուր կապ՝ ի շահ երեխայի դաստիարակության: Կարևոր է ,որ ծնողները հավասար ընկալեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությունը,զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը,գնահատեն նրա անձնային հատկանիշները և մասնակցեն մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացին:

Համագործակցության արդյունքում թե՝ ծնողը և թե դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների,համկրանքների,հակակրանքների մասին:Այս

տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին:Ընտանիքի և մանկապարտեզի համգործակցության կենտրոնում երեխան է:Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որ երեխան ինքնուրույն կարողանա հասնել հաջողության:

Մերաշխատանքի նպատակն է ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները և առավելությունները երեխայի դաստիարակության հարցում:

Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները

Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է,ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը:

«Ընտանիքը երեխայի մթնոլորտն է,նրա մեջ աճում և զարգանում են երեխայի մտավոր ուժերը,նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները,բոլորն այն չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը և այն ձևով,ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին» (Ռաֆֆի): Յ. Ա. Կոմենսկին նշում էր,որ «մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ,հանգստյան օրեր,արձակուրդ» :

Վերջապես «Երեխան ընտանիքի հայելին է » սահմանում դարձած արտահայտությունը լիովին նկարագրում է և կարևորում ընտանիքի

անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործում:Հոգեբան Ա. Ն. Լեոնտևը նշում է,որ «նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է իրեն մշտապես շրջապատող հարազատ և մտերիմ մարդկանց հանդեպ,ընկալում և ընդունում է միայն նրանց դաստիարակչական ներգործությունը և դժվարությամբ է համակերպվում օտարների ներկայության հետ»:

Ընտանիքը ապահովում է երեխայի հետագա երջանիկ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ և ձևավորում որոշակի կենսակերպ:

Ընտանեկան դաստիարակությամբ է մեծ չափով պայմանավորված երեխայի հետագա գոյության և կենսագործունեության ներդաշնակությունը:

Ընտանեկան դաստիարակության գործընթացն արդյունավետ է երբ կազմակերպվում է ոչ թե կամայական եղանակներով այլ մտածված և հետևողական մանկավարժական աշխատանքի միջոցով:

Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը

ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորհիվ:Ճիշտ է յուրաքանչյուր ընտանիք ունի դաստիարակության իր սկզբունքներն ու մոտեցումները,սակայն դրանք պետք է պարբերաբար վերանայվեն,ճշտվեն և համապատասխանեցվեն ընտանեկան դաստիարակության մանկավարժորեն ընդունելի պահանջներին:

Ժամանակակից մանկավարժությունը դաստիարակության համակարգում առավել կարևորում է ընտանեկան դաստիարակությունը, ընդունում է դրա գերակայությունը,համարելով ընտանիքը բազմաբնույթ սոցիալական խումբ,հիմնվելով ընտանիքի դաստիարակչական լայն հնարավորությունների վրա:

Ընտանեկան դաստիարակության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է ընտանիքի սերտ համագործակցությունը նախադպրոցական կրթական հաստատությունների հետ:

Նախադպրոցականի դաստիարակության նպատակը և խնդիրները

Դաստիարակության նպատակի հարցը հուզել է բոլոր ժամանակների մանկավարժներին,քանի որ նպատակն է որոշում և թելադրում մանկավարժական գործունեության բնույթն ու եղանակները : Դաստիարակության ժամանակակից տեսությունն առավելպես կարևորում է դաստիարակության գործընթացի նպատակադրումն ուղղված կոնկրետ վերջնարդյունքի ստացմանը:Դաստիարակության նպատակն ու արդյունքը սերտ կապված են:Դաստիարակության նպատակը մանկավարժական գործունեության կազմակերպմամբ ակնկալվող արդյունքի արձանագրումն է:

Նախադպրոցական տարիքում դաստիարակության նպատակը

հուզականորեն կայացած,աշխարհին դրական վերաբերվող,ինքնուրույն և ստեղծագործաբար մտածող երեխայի ձևավորումն է:

Դաստիարակության հիմնական խնդիրներն են.

- Ֆիզիկական դաստիարակությունը
- բարոյական դաստիարակությունը
- աշխատանքային դաստիարակություն
- գեղագիտա-գեղարվեստական դաստիարակությունը
- մտավոր դաստիարակություն

Ֆիզիկական դաստիարակություն

Նախադպրոցահասակ երեխայի ընդհանուր զարգացման գոծընթացն առաջին հերթին պայմնավորված է նրա ֆիզիկական զարգացման աստիճանով:Միայն ֆիզիկապես առողջ և առույգ երեխայի հոգեկանն է ենթակա լիարժեք զարգացման:Ֆիզիկական զարգացման լավագույն միջոցը ֆիզիկական դաստիարակությունն է,որի անհրաժեշտությունն առավել կարևորվում է նախադպրոցական տարիքում:

Ֆիզիկական դաստիարակության կարգախոսը Ժ. Ժ. Ռուսոյի «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» հանրահայտ ձևակերպումն է:

Նախադպրոցականի ֆիզիկական զարգացման ընթացքը մեծապես կախված է նրան խնամող մեծահասակներից:Երեխայի ֆիզիկական զարգացմանը կարել է նպաստել հատուկ նախատեսված,նպատակասլաց և հետևողական մանկավարժական գործընթացի կազմակերպման միջոցով:

Ֆիզիկական դաստիարակությունը ֆիզիկական և սպորտային գործունեության հիման վրա կառուցվող հատուկ կազմաեպված և նպատակաուղղված մանկավարժական գործընթաց է,որի նպատակը երեխայի ֆիզիկական զարգացումն է:

Վերջին տարիններին մանկավարժական գիտությունների համկարգում բուռն զարգացում է ապրում «վալեոլոգիան», որը գիտություն է առողջ մարդու մասին:Գիտության հիմքում ընկած է սեփական մարմինը ճանաչելու սկզբունքը,ինչպես և անձի շահագրգռվածությունը նրա ակտիվ դիրքորոշումը առողջության պահպանման գործում:Այս դիրքորոշումը արդյունավետ է նախադպրոցական տարիքում երբ երեխային սովորեցնելով սիրել սեփական մարմինն ու հոգատարությամբ վերաբերվել նրան կարելի է նպաստել որոշակի դրական սովորությունների և կենսակերպի ձեռքբերմանը:

Փիլիսոփա Է. Ֆրոմը գտնում է որ ինքնասիրության և արժանապատվության զգացողությունները ծնվում են սեփական գոյի հանդեպ սիրո և հարգանքի անհրաժեշտությունից:

Ֆիզիկական դաստիարակության խնդիրները պետք է իրականացվեն բարոյական դաստիարակության խնդիրների հետ մեկտեղ:

Բարոյական դաստիարակություն

Բարոյականությունը հասարակական գիտակցության ձև է,որը փոխանցվում և գնահատվում է հասարակության կողմից: Բարոյական դաստիարակությունը երեխայի համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: Այն կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից:

Բարոյական գիտակցության հետ մեկտեղ բարոյական դաստիարակության ընթացքում ձևավորվում են անձնային կարևորոգույն հատկություններ,որոնք դաստիարակվում են բարոյական գիտակցությունից անկախ:

Այդպիսի հատկություններից են, օրինակ՝ բարությունը,մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը, մաքրասիրությունը:

Բարոյական դաստիարակության մանկավարժական պայմանները բխում են երեխաների պահանջներից,որոնք հիմնականում պայմանավորված են նրանց փոխհարաբերությունների նպատակաուղղվածությամբ և

բնույթով:Երեխաների փոխհարաբերությունները ձևավորվում և դրսևորվում են հասակակիցների միջավայրում՝ մանկական կոլեկտիվում:

Կոլեկտիվում երեխաների փոխհարաբերությունները կարգավորվում են նաև բարոյական նորմերով և կանոններով:Բարոյական նորմերի և կանոնների իմացությունը օգնում է երեխային ինքնահաստատվելու հասակակիցների միջավայրում:

Բարոյական դաստիարակության հետ մեկտեղ նախադպրոցականի հետ մեկտեղ նախադպրոցականի անձնավորության զարգացմանը նպաստում է աշխատանքային դաստիարակությունը:

Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքն իբրև մարդկային կարևորագույն գործունեություն ձևավորվում է նախադպրոցական տարիքում:

Աշխատանքի միջոցով երեխան մտերմանում է մեծահասակների հետ ճանաչում է սեփական հնարավորությունները,համագործակցում մեծահասակների հետ,սովորում պլանավորել և վերահսկել սեփական գործողությունները,ձեռք է բերում կյանքի հմտություններ:

Երեխայի աշխատանքն ուղղված է ինքնահաստատմանը և ինքնահիրացմանը:

Աշխատանքային դաստիարակության համակարգի գլխավոր տարրն աշխատանքային գործունեութունն է ,որի ձևավորմանն է ուղղված աշխատանքային դաստիարակության համակարգը:

Աշխատանքային գործունեության կարևորագույն բաղադրիչներն են աշխատանքի նպատակն ու արդյունքը:Աշխատանքային գործունեության

նպատակն արտացոլում է աշխատանքի արդյունքին հասնելու ուղին:Նպատակը բխում է ակնկալվող արդյունքից և ուղղված է դրան:Աշխատանքի նպատակադրումը բավական բարդ կարողություն է և ձեռք է բերվում նախադպրոցական տարիքում աստիճանաբար:

Աշխատանքային դաստիարակությունը մանկավարժական գործընթաց է՝ ուղղված աշխատանքի հանդեպ գիտակցված վերաբերմունքի, աշխատանքի արդյունքը գնահատելու կարողության և աշխատելու պահանջմունքի ձևավորմանը նախադպրոցականի աշխատանքային դաստիարակոիթյան գործընթացն ուղղված է երեխայի անձնային

հատկությունների ձևավորմանը՝ նրա կողմից ծավալվող աշխատանքային գործունեության ընթացքում:

Աշխատանքի կամակերպման ամենաարդյունավետ ձևը նախադպրոցական տարիքում երեխաների կոլեկտիվ (համատեղ) աշխատանքն է :

Երեխայի ներդաշնակ զարգացմանը նպաստում են նաև գեղագիտական և էկոլոգիական դաստիարակության գործընթացները,որոնք լրացնում են դաստիարկության մյուս կողմերը և միասնաբար ձևավորում երեխայի ամբողջական պատկերը աշխարհի մասին:

Գեղագիտա-գեղարվեստական դաստիարակություն

Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է՝ ուղղված ստեղծագործելու ընդունակ անձնավորության ձևավորմանը:Ստեղծագործող անձնավորությանը բնորոշ է կյանքի ակտիվ դիրքորոշում,գեղեցիկն ընկալելու,զգալու և գնահատելու ընդունակություն,ինչպես նաև գեղեցիկի գաղափարով առաջնորդվելու ցանկություն և կարողություն:Գեղագիտական դաստիարակության հիմքում ընկած է հուզա-զգացմունքային ոլորտի զարգացումը,որն առավել բուռն ընդանում է վաղ և նախադպրոցական տարիքում:Գեղագիտական դաստիարակությունը նպատում է նախադպրոցակնի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի

հարստացմանը,ակտիվացնում է նրա իմացական գործունեությունը և դրդում նրա ստեղծգործության , բացահայտում է երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:

Գեղարվեստական գրականությունը անփոխարինելի է նախադպրոցականի գեղագիտական գիտակցության զարգացման գործում:Հատկապես հզոր է ժողովրդական բանահյուսության (հեքիաթների,շուտասելուկների,սուտասելուկների,հանելուկների) ներգործությունը:Հեքիաթներում պատկերված մարդկության բարոյական

արժեքները յուրացվում են երեխաների կողմից բնական եղանակներով և միտում ունեն փոխանցվելու իրական կյանք:

Մտավոր դաստիարակություն

«Քաղաքակրթության գլխավոր խնդիրը մարդուն մտածել

սովորեցնելն է» (Թ. Էդիսոն):

Մտավոր դաստիարակության համակարգում առաջին պլան են մղվում գիտելիքների կիրառման, մտավոր գործունեության և ճանաչողական ակտիվության ընդունակությունները: Ինչպես նշում է նախադպրոցականի մտավոր զարգացման խնդիրներով զբաղվող առաջատար մասնագետ Ն. Ն. Պոդյակովը, այսօր չափազանց կարևոր է երեխաներին սովորեցնել մտածել,հուշելով նրանց իմացության բանալին,օգնել ինքնուրույն որոնել և որոշումներ կայացնել քանի որ նախադպրոցական մանկությունը մտավոր զարգացման և դաստիարակության ամենանպաստավոր շրջանն է:

Կ. Դ. ՈՒշինսկին նշում էր որ «մտավոր աշխատանքը ամենածանր աշխատանքն է մարդու համար», հետևաբար անհրաժեշտ է ձևավորել երեխայի«մտավոր գործունեությունը « զգուշորեն և աստիճանաբար»:

Ընտանիքի դերը երեխայի զարգացման հարցում

Երեխայի լիարժեք զարգացման,նրա անձնավորության ձևավորման գործընթացների արդյունավետությունը պայմանվորված է սոցիալական բոլոր ինստիտուտների մանկավարժական ներգործության փոխազդեցությամբ:Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացման գործընթացում առանձնահատուկ կարևորվում է ընտանիքի, նախադպրոցական կրթական հաստատության և դպրոցի հաջորդական և փոխպայմանավորված մանակավարժական

ներգործությունը:Մանկավարժական աշխատանքների հաջորդականությունն իրականացվում է կրթության բովանդակության փոխանցման և յուրացման աստիճանականության և դաստիարակության գործընթացում երեխային ներկայացվող պահանջների միասնականության ճանապարհով:

Երեխայի դաստիարակությունը սկսվում է ընտանիքում:Ընտանիքն է սոցիալականացման առաջին օղակը ուր սկիզբ է առնում երեխայի սոցիալական էությունը:Ընտաիքում է յուրացվում առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները բացահայտվում են երեխայի անհատական առանձնահատկություններն ու ձևավորվում բնավորության գծերը դաստիարակվում են բարոյական հատկություններ և սոցիալական վարքագծի հիմքեր:Ընտանիքը այն կայուն սոցիալական օղակն է,որն ուղղեկցում և առաջնորդում է երեխային իր ողջ կյանքում:Ժամանակակից մանկավարժությունն ընդգծում է ընտանիքի և ընտանեկան դաստիարակության գերակայող դերերը դաստիարկության և նրա անձնավորության ձևավորման գործում:

Մանկապարտեզը և այլ նախադպրոցական կրթական հաստատությունները կոչված են իրականացնելու նախադպրոցական տարիքի երեխաների հասրակական դաստիարակությունը: Նախադպրոցական կրթօջախների հիմանկան մանկավարժական գորառույթը երեխայի դաստիարկության կազմակերպումն է հասակակիցների միջավայրում,նախադպրոցահասակ երեխաների հասրակական կյանքի համար անհրաժեշտ պայմանների

ապահովումը:Մանկապարտեզում է երխան սկսում հաղորդակցվել և համագործակցել,որոշումներ կայացնել,համադրելով սեփական ցանկություններն ու կարծիքը ընկերների ցանկությունների կարծիքի հետ:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության ձևերը

Ընտանեկան դաստիարակության դժվարությունների հաղթահարմանը նպաստում է ընտանիքի սերտ համագործակցությունը նախադպրոցական կրթական հաստատությունների հետ:Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության հիմքում ընկած է երկու սկզբունք

- նախադպրոցական կրթական հաստատության ներքին ներգործությունների հանդեպ բաց լինելու
- նախադպրոցական կրթական հաստատության արտաքին ներգործությունների հանդեպ բաց լինելու:

Առաջին սկզբունքը ենթադրում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ ներգրավում մանկապարտեզի մանկավարժական գործընթացին:Ծնողների մանկապարտեզի մանկավարժական աշխատանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մանկապարտեզի մանկավարժական գործընթացի բոլոր սուբյեկտները:Մանկավարժական գործընթացի բոլոր մասնակիցների ակտիվ դիրքորոշումը նպաստում է երեխաների դաստիարակությանը համակցված,փոխպայմանավորված և փոխպատասխանատու գործողությունների միջոցով:Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը օգնում է երկուստեք ճանաչելու հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու նպատակով:Ծնողների ներկայությունը մանկապարտեզում վստահություն է ներշնչում երեխային և կրկնապատկում նրա սովորելու և աշխարհը ճանաչելու ցանկությունը:Նրանք հաճույքով և գերագույն հարգանքով են

արձանագրում ծնողների մանկապարտեզի աշխատանքների ակտիվ մասնակցության փաստը և հպարտանում են ծնողներով:Ծնողներն իրենց հերթին ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելիքներ և կարողանում են գնահատել մանկավարժի ծանրագույն աշխատանքը:Մանկապարտեզի դեպի ներս բաց լինելու սկզբունքը ենթադրում է մանկապարտեզի մանկավարժական գործընթացին

նպաստող,ներխուժող յուրաքանչյուր ներգործության ընկալում, ընդունում և կիրառում:

Համագործակցության երկրորդ սկզբունքը կարևորում է ,մանկապրտեզի դեպի դուրս բաց լինելու անհրաժեշտությունը:Մանկպարտեզը պատրաստ պետք է լինի համագործակցելու միկրոսոցիումի՝ համայնքի բոլոր սոցիալական ինստիտուտների հետ:Պարտադիր է մանկապարտեզի համագործակցությունը տարածքի դպրոցների, երաժշտական և սպորտային դպրոցներ,մանկական ակումբների հետ:Ցանկալի է և չափազանց արդյունավետ մանկապարտեզի փոխադարց կապը մշակութային հաստատությունների հետ (*գրադարաններ թատրոններ, թանգարաններ*):Կենսական անհրաժեշտություն է և ժամանակի պահանջ մանկապարտեզի համայնքի վարչական միավորների հետ փոխադարց կապի հաստատումը:

Աճող սերնդի դաստիարակության և կրթության հաջողությունները պայմանավորված են բոլոր սոցիալական ինստիտուտների միջև հաստատվող փոխվստահելի և փոխպատասխան համագործակցությամբ:

Համագործակցության կազմակերպման և համակարգման բարդ գործառույթը պատկանում է մանկապարտեզի մանկավարժական անձնակազմին՝ տնօրենի գլխավորությամբ:Մանկապարտեզի և ընտանիքի փոխադարձ կապի ձևերը պարբերաբար վերանայվում և լրամշակվում են: Համագործակցության ավանդական դարձած ձևերին ավելանում են ժամանակակից եղանակները,որոնք բխում են հասարակության նախադպրոցական կրթությանը ներկայացվող

այսօրվա պահանջներից: Ամենաավանդական ձևը մանկավարժի պարբերական այցելություններն են երեխաների ընտանանիքներ: Մանկվարժի հաճախակի այցելությունը հնարավորություն է տալիս ուսումնասիլելու երեխային տան պայմաններում,ծանոթանալու ընտանիքի բոլոր անդամներին և կենսական պայմաններին:Ավանդական ձևերից են ծնողական ժողովները,բաց դռների օրերը,

կոնսուլտացիանները և հատուկ կազմակերպվող գիտական կոնֆերանսները ծնողներին հուզող թեմաների շուրջ: Փոխադարձ կապի նշված ձևերը առաջին հերթին նպաստում են մանկավարժական գիտելքների փոխանցմանը և տարածմանը ծնողական միջավայրում, նրանց մանկավարժական մշակույթի բարձրացմանը:

Երիտասարդ ծնողների հետ կազմակերպվում են նաև սեմինար-պրակտիկաներ:Բավական արդյունավետ են համատեղ միջոցառումները, որոնք կարող են տարբեր նպատկների ծառայել:Օրինակ՝ տիկնիկային ներկայացման համտեղ դիտումն ու քննարկումը ճանաչողական բնույթի է և հիմնականում նպաստում է միացյալ ուժերով ներկայացման բովանդակության վերլուծությանը:Համատեղ տոնակատարություններն ուղղված են երեխայի հուզական և սոցիալական փորձի հարստացմանը: Բանակի տոնին նվիրված հայրիկների հետ համատեղ միջոցառումը նպաստում է հայրիկների ակտիվ մասնակցութանը մանկապարտեզի աշխատանքներին: Իսկ ծննդյան տոնակատարություններն ունեն հիմնակնում մերձեցման նպատակ: Նախադպրոցական մանկավարժությունն առաջարկում է նաև համագործակցության ժամանակակից եղանակներ:

Այսօր չափազանց կարևորվում է մանկապարտեզում ծնողական անկյան ստեղծումը,որը նախատեսվում է որպես ծնողների՝ մանկավարժի և միմյանց հետ հանդիպման վայր: Համագործակցության հետաքրիր եղանակ է ինտելեկտուալ խաղը ,որին մասնակցում են ծնողները: Նրանք կարող են հանդես գալ հուշողների խմբի,ժուրիի կամ մասնակիցների դերում: Համագործակցության արդյունավետ ձև է ծնողների հետ համատեղ կազմակերպվող սպորտային կամ էկոլոգիական միջոցառումները և խաղերը: 14

Համագործակցությունը ընտանիքի հետ

Երեխայի կրթադաստիարակչական գործում առաջնային դերն ունի ընտանիքը:Դրական համագործակցությունը երեխայի շուրջ ստեղծում է մի միջավայր,որտեղ ընանիքները, ուսումնական հաստատությունը և համայնքը համատեղ աշխատում են երեխաների կրթությանն ու

դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար: Մանկապարտեզների և ընտանիքների միջև դրական հաղորդակցությունն արդյունավետ ուսումնական մթնոլորտ է ստեղծում երեխաների համար:

Երեխայի ընտանիքի անդամները նրա առաջին ուսուցիչներն են:Մինչև նախադպրոցական ծառայություն հաճախելը երեխաները շատ բան են սովորում ընտանիքում՝ սկսած բաժակով խմելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամներն են երեխաների համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, շրջապատում նրանց սիրով, կրթում և դաստիարակում: Նրանք շատ լավ են ճանչում իրենց երեխաներին և գործուն դեր ունեն նրանց դաստիարակության գործընթացում: Երեխաներն իրենց վրա կրում են ընտանիքի ազդեցությունը ուստի դաստիարակները պետք է լրջորեն հաշվի առնեն այդ փաստը և երեխաների հետ աշխատելիս ամրապնդեն կապն ընտանիքների հետ՝ նկատի ունենալով դրանց առանձնահատկություններն ու տարբերությունները:

Ընտանիքի անդամներին ընձեռվում են ուսումնական հաստատությունում իրենց երեխայի կրթադաստիարակչական աշխատանքներին մասնակցելու տարբեր հնարավորություններ: Նրանք կրթական հաստատության ցանկալի հյուրերն են , և շատ խրախուսելի է նրանց գիտելիքների և փորձի կիրառումը տարբեր ուսումնական և կազմակերպչական նպատակներով:

Ծնողների տրամադրվածությունն ապահովելը սկսվում է մանկավարժական կազմի հետ առաջին իսկ հանդիպումից: Հարգալից վերաբերմունքն աշխատանքի սկզբունքերի ընթացակարգի,

նպատակների և գործողությունների վերաբերյալ քննարկումները մեծապես նպաստում են ընտանիքների ներգրավմանը երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացում:

Հարկ է բացատրել հենց սկզբից, որ նրանց մասնակցությունը պարապունքներին շատ օգտակար է թե՝ դաստիարակների թե՝

երեխաների համար: Ընտանիքի անդամների նպատակային ներգրավումը պահանջում է ժամանակ,պլանավորում և պատկերացում ընտանիքի անդամների հետաքրքրությունների ու հնարավորությունների մասին: Ծնողներին անհրաժեշտ է նախապես ծանոթացնել կատրվելիք աշխատանքներին, իմանալ նրանց նախասիրությունները,մասնագիտական հնարավորություններն, աշխատանքային ծանրաբեռնվածությունը և այլն:

Անհատականացված ուսուցում ապահովելու համար մանկավարժը պետք է մշտական կապի մեջ լինի երեխայի ընտանիքի հետ: Նրա պարտականութունն է ընտանիքի հետ ամուր կապեր հաստատել ու պահպանել: Ծնողական ժողովների և ընտանքի անդամերի հետ այլ հանդիպումների ընթացքում դաստիարակն անպայման պետք է անդրադառնա երեխայի համակողմանի զարգացման կարևորությանը և առանձին ներկայացնի զարգացման յուրաքանչյուր ոլորտն ըստ տվյալ տարիքի երեխաների զարգացման չափորաշիչներին: Երեխայի զարգացման առաջնընթացի ու կարքիների վերաբերյալ քննարկումներն ու տեղեկությունների փոխանակումը օգտակար են և՛ ընտանքի անդամների, և՛ դաստիարակների համար:

Որքան ավելի սերտ և արդյունավետ լինի ուսումնական հաստատություն-ընտանիք կապը, այնքան ավելի մեծ աջակցություն կստանան երեխաները՝ ուսումնառության և դաստիարակության ընթացքն ավելի դրական և արդյունավետ կազմակերպելու առումով:

Ընտանիքի հետ համագործակցության ձևեր

- Այցելություններ տուն
- Երեխային հաստատություն բերլու և տուն տանելու ընկած ժաման կը

- Հեռախոսային զանգեր
- Ծնողական և մանկավարժական ժողովներ
- Առաջարկությունների տուփեր

Հետազոտական աշխատանքի թեմայի նպատակներից ելնելով՝ կազմակերպել եմ ծնողական հանդիպում մանկապարտեզում և մեկ տնայց:

Հրավիրվել է 05.12.2023թ. ծնողական հանդիպում, հրավերը տրվել է ծնողներին առցանց խմբում :

Նպատակը՝ 1 Ծնողներին ծանոթացնել 2023-2024թթ. առաջին
եռամսյակում երեխաների կատարած
կրթաուսումնադաստիարակչական աշխատանքներին
2Քննարկելու ծնողներին հուզող մի շարք հարցեր
3 Գործնական առաջադրանքների միջոցով ամրապնդել
ծնողի և մանկապարտեզի միջև կապը:

Ծնողական հանդիպմանը կիրառվեցին տարբեր հետքրքիր մեթոդներ՝ սառույց կոտրող վարժություն և կծիկի մեթոդ:
Հանդիպումը անցավ հետաքրիր և ջերմ մթնոլորտում ծնողները հասնդես եկան յուրատիպ առաջարկներով որոնք հաշվի կառնվեն հետագա աշխատանքերում:

Կազմակերպվել է տնայց սան Մ. Տ.-ի տուն:
Մ. Տ.-ն ծնողազուրկ է(հայրը մահացել է ավտովթարից):
Ապրում է մայրիկի,տատիկի,ու պապիկի հետ:
Նպատակն էր՝ ծանոթանալ ընտանեկան միջավայրին , ընտանիքում դիտել երեխայի վարքը, խոսքը հարաբերությունները ընտանքի անդամների հետ: Քանի որ 5 օր երեխան չէր հաճախել մանկապարտեզ, այցի նպատակը նաև՝ տեսակցությունն էր:

Տնօրենի կարծիք

Ծնողական հանդիպումը անցավ ջերմ ու հարազատ մթնոլորտում:

Ծնողները ծանոթացան իրենց երեխաների աշխատանքներին:
Բավականին ոգևորիչ էին դաստիարակի կողմից կիրառված մեթոդները (ծառ նկարել,սարդոստայն):
Ծնողները հանդես եկան իրենց առաջարկներով:Դաստիարակների հետ մշակեցին հաջորդ եռամսյակում նախատեսվող աշխատանքները:

Մեթոդիստի կարծիք

Ծնողական հանդիպումը ծառայեց իր նպատակին:Ծնողները ծանոթացան ուս. տարվա առաջին եռամսյակում կատարված բոլոր ուսումնական բաղադրիչներով կազմված աշխատանքների հետ, խաղերի ժամանակ ակտիվ փոխհամագործակցեցին միմյանց և մանկավարժական աշխատողների հետ՝ ընդլայնելով պատկերացումները մանկապարտեզի ուսումնադաստիարկչական գործունեության մասին:
Ծնողական հանդիպման միջավայրը համապատասխան էր և հագեցած:

Գրականության ցանկ

1. Ս.Ա. Մարության Ա.Մ. Դալլաքյան «Նախադպրոցական մանկավարժություն»
2. Ժ. Ջոնս, Ս. Իգնելզի, «Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը»:

Դասընթաց բուհերի վաղ մանկական տարիքի երեխաների կրթության մասնագետների համար, ՄՌՄԿ. Վաշինգտոն 1997: